**Արձանագրություն N 3.1**

«ԿԿ-ԷԱՃԾՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23 հոկտեմբերի 2023թ. ժ. 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Հասրաթյան, Ա. Մելիքյան, Մ. Խարատյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Եղիազարյան

## I. Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| հ/հ | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | Մեգա Օլիմպ ՍՊԸ | ք. Երևան, Լեփսիուսի 41-39 |
| 2 | «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ | ք. Երևան, Սարի Թաղ 5-5 |
| 3 | Սուր և Նիզակ ՍՊԸ | ք. Երևան, Գրողների 18 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.
- համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի բացման և գնահատման նիստերից և անգործության ժամկետի ավարտից հետո, օրենքով սահմանված կարգով, որրորդ աշխատանքային օրը Մեգա Օլիմպ ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Վերջինս օրենքով սահմանված ժամկետներում՝ հինգ աշխատանքային օրում պետք է իր կողմից ստորագրված պայմանագիրը կցեր համակարգում, սակայն պայմանագիրը չի ստորագրվել: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ...լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:...) գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել ՀՀ

Ֆինանսների նախարարությանը Մեգա Օլիմպ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, ինչպես նաև որոշեց ԿԿ-ԷԱՃԾՁԲ-24/02 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հանձնաժողովի՝ նախագահ՝ ____________ Կ. Հակոբյան

Անդամներ՝ ____________ Ս. Հաարաթյան

____________ Ա. Մելիքյան

____________ Մ. Խարատյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Ա. Եղիազարյան